

ԵՂՎԱՐԴԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

«Աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը
լուծել բնապահպանական
խնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և
ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի
իրականացման կարողությունները»



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարտ - դեկտեմբեր 2015

Ծրագիրն իրականացնում է «ԲԼԵՁԱՆ»
բնապահպանական, սոցիալական, բիզնեսի
աջակցության ՀԿ-ն ԵԱՀԿ Երևանի
գրասենյակի ֆինանսական աջակցությամբ



ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան և ընդհանուր տեղեկություններ 3

2. Ծրագրի իրագործումն ըստ նպատակների 5

Ծրագրի առաջադրանքները, Գործունեություն 1.1

- Գործողություն 1.1.1 5

- Գործողություն 1.1.2 9

- Գործողություն 1.1.3 13

- Գործողություն 1.1.4 14

3. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները - - - - - 16 էջ

4. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ - 16 էջ

5. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ - - - - - 17 էջ





Գործունեության եռամսյակային հաշվետվություն 2015թ.

1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ

Սույն ծրագրի նպատակն է նպաստել շրջակա միջավայրի լավ կառավարման և համայնքային Անվտանգության սկզբունքների ներդրմանը՝ Հայաստանի Օրհուս Կենտրոնների միջոցով շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, տեղական և ազգային մակարդակներում աջակցելով ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի Կոնվենցիայի իրականացմանը:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար չափազանց կարևոր է հանրության պատշաճ մասնակցությունը որոշումների կայացմանը, որը բնապահպանական լավ կառավարման, Տեղական մակարդակում ժողովրդավարության հաստատման և համայնքային անվտանգության սկզբունքների ներդրման առանցքային հարցն է և պատահական չէ, որ դրան են ուղղված Օրհուսի Կոնվենցիայի մյուս երկու սկզբունքները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Օրհուս կենտրոնների առաքելությունն է՝ աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը համատեղ ուժերով լուծել բնապահպանական հիմնախնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները, այս ծրագրի իրականացման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն գործողություններին, որոնք ուղղված են հանրության իրազեկության և որոշումների կայացման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացմանը: Եղվարդի Օրհուս կենտրոնը հարթակ է հանդիսացել պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ հանդիպելու, քննարկելու, տեղեկատվություն փոխանակելու, շրջակա միջավայրի և բնապահպանական անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու և լուծման ուղիներ գտնելու համար:



Ըստ ծրագրի նպատակին հասնելու ժամանակացույցով նախատեսված գործողությունների, ինչպես նաև ընթացքում ծագած խնդիրներին լուծում տալուն նպատակով, հաշվետու ժամանակահատվածում, Եղվարդի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվել է 52 միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ՝ 15 միջոցառում, հասարակության մասնակցության ուղղությամբ՝ 16, էկոկրթությանն ուղղված՝ 10 միջոցառում, մասնակցել և աջակցել՝ 7 հասարակական լսման իրականացմանը, իրականացվել է՝ 4 խորհրդատվություն, որոնց մասնակցել են ընդհանուր թվով 670 մարդ, որից 316 տղամարդ և 354 կին: Քննարկված հարցերի կամ նախագծերի մասին տարածվել է ձեռք բերված

տեղեկատվությունը:

Միջոցառում	Քանակ
Ընդամենը իրականացված միջոցառումներ	52
Այդ թվում	
Տեղեկատվության մատչելիությանն ուղղված	15
հասարակության մասնակցության ուղղությամբ	16
Հանրային լսումների մասնակցություն	7
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ	10
խորհրդատվական հանդիպումներ	4



2. Օրագրի իրագործումն ըստ դրված նպատակների.

Օրագրի առաջադրանքները.

Գործունեություն 1.1: Եղվարդի Օրհուս կենտրոնը Հայաստանում շարունակելու է բարձրացնել իրազեկությունը և արձագանքել բնապահպանական մարտահրավերներին և սպառնալիքներին՝ տրամադրելով հանրությանը լայնածավալ բնապահպանական տեղեկատվություն:

Եղվարդի Օրհուս կենտրոնը աջակցել է քաղաքացիական հասարակության ներգրավվածության ապահովմանը բնապահպանական կառավարման եւ որոշումների կայացման գործընթացներում, առաջարկում արդյունավետ համագործակցության հարթակ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև:

Գործողություն 1.1.1 Օրհուս կենտրոնները պետք է հավաքեն եւ տարածեն Բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետևապլած տեղեկատվություն՝ աղտոտված ջրի և քաղաքային միջավայրի օդի վերաբերյալ, հանքարդյունաբերական վայրերին մոտ և այլ բնապահպանական խնդիրներ. պետք է բարձրացնեն հանրային մասնակցության արդյունավետությունը, զարգացնեն բաց վարչական մշակույթ, որն աջակցելու է հասարակության մասնակցությունը եւ թափանցիկությունը բնապահպանական հարցերում, գնահատեն դրանք որպես դրական ներդրում ժողովրդավարական, արդյունավետ և լավ կառավարման համար:

Ենթագործողություն 1/1

Հավաքագրել տեղեկատվություն կապված բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետ, որոնք առաջանում են քաղաքային միջավայրում աղտոտված ջրից և օդից, հանքարդյունաբերական օբյեկտների մոտ և այլ բնապահպանական թեժ կետերում:

1/1.1 Կատարված քայլեր

Կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում պատկան մարմիններին շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող կամ շրջակա միջավայրում պլանավորվող գործողությունների հնարավոր ազդեցության վերաբերյալ ուղղել է թվով 11 հարցում, որոնք ուղղված են եղել Բնապահպանության նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն, Եղվարդի քաղաքապետարան, “Երևան Ջուր” ՓԲԸ, Նաիրիի բժշկական կենտրոն, Նաիրիի տարածաշրջանում գործունեություն ծավալող ընկերություններին: http://aarhus.am/letters_2015/harcum%20Yeghvard%20municipality_21_04.pdf



Ենթագործողություն 1/2

Հարթակ տրամադրել՝ ապահովելու համար հասարակության մասնակցությունը հանրային լուսմների, սեմինարների, բանակցությունների և միջնորդությունների համար:

1/2.1 Կատարված քայլեր

Կենտրոնը խորհրդատվության տրամադրմամբ աջակցել է երիտասարդների կողմից ներկայացված նախաձեռնությունների մշակմանն ու քննարկմանը, որոնք ուղղված են եղել հասարակական գործունեություն իրականացնելու, ներգրավելու շրջակա միջավայրի հարցերի շուրջ որոշումների կայացման գործընթացներում:

1.2.2 Ձեռք բերված արդյունքներ

Կատարված աշխատանքների արդյունքում մշակվել և ներկայացվել է երկու բնապահպանական ծրագրային առաջարկ, կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացնելու համար:

Այս ուղղությամբ արդյունքներից մեկն այն է, որ նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը տեղի ունեցավ "Ապագայի իրազեկ քաղաքացի" բնապահպանական դասընթացը, որն իրականացվել է «Եղվարդ» երիտասարդական բնապահպանական հասարակական կազմակերպության կողմից Օրհուս կենտրոնի հետ համագործակցությամբ՝ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսավորմամբ, ինչպես նաեւ Երիտասարդական ակումբների դաշնության աջակցությամբ: Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության սկզբունքով իրականացված հնգօրյա ծրագրին մասնակցում էին Հայաստանի եւ Արցախի 24 երիտասարդներ, որոնք հետաքրքրված են բնապահպանական կրթության, շրջակա միջավայրի անվտանգության ապահովման, ինչպես նաեւ կայուն զարգացման հայեցակարգին առնչվող հիմնախնդիրներով: Ծրագիրը նպատակ ուներ երիտասարդների տեղեկացվածության մակարդակի բարձրացմամբ եւ ուսուցման կազմակերպմամբ նպաստել նրանց ակտիվ ներգրավմանը բնապահպանական հիմնախնդիրների լուծման գործընթացում՝ այդ կերպ երիտասարդների շրջանում արմատավորելով առողջ եւ կայուն շրջակա միջավայր ունենալու անհրաժեշտությունը եւ բնապահպանական խնդիրների նկատմամբ պատասխանատու կեցվածք դրսևորելը: Ծրագրի ընթացքում երիտասարդները կիրառական գիտելիքներ են ձեռք բերել բնապահպանական խնդիրների հետ կապված հանրությանը պատշաճ իրազեկելու, բնապահպանության ոլորտին առնչվող որոշումների ընդունման գործում ակտիվ մասնակցություն ունենալու մեխանիզմների, կայուն զարգացման ոլորտում

ՀՀ միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների իրականացման եւ ընթացքի վերաբերյալ: Ծրագրի ընթացքում ներկայացվել է Օրհուսի կոնվենցիան, քննարկվել հիմնասյունների, Օրհուս կենտրոնների գործունեության վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում Օրհուս կենտրոնների գործունեությանը մանրամասն ծանոթանալու համար կազմակերպվել է նաև այցելություն Երևանի Օրհուս կենտրոն, որտեղ երիտասարդներին ներկայացվել է Օրհուսի կոնվենցիայի, Էկոիրավունքի, բնապահպանական տեղեկատվության և կենտրոնների գործունեության մասին:



Ենթագործողություն 1/3

Հարթակ տրամադրել՝ ապահովելու համար հասարակության մասնակցությունը հանրային լսումների, սեմինարների, բանակցությունների եւ միջնորդությունների

1/3.1 Կատարված քայլեր

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության ներկայացուցիչների հետ ունեցել է բազմաթիվ հանդիպումներ: Քննարկել «Եղվարդի ջրամբարի Տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ» ծրագիրը, ներկայացվել ներկայումս իրականացվող հետազոտական աշխատանքները եւ ծանոթացել արդյունքներին, ինչպես նաև ծրագրի հետագա քայլերին եւ քննարկել համագործակցության հարցերը: Համագործակցության շրջանակներում ՀՀ ԳՆ Ջրային Տնտեսության Պետական կոմիտեի, Եղվարդի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպվել է «Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման նախագծի շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտ» փաստաթղթի վերաբերյալ առաջին և երկրորդ հանրային լսումները, նախագծի ներկայացման համար իրազեկման սեմինարներ Եղվարդ և Նոր Երզնկա համայնքներում, որին մասնակցել են նախագծի թիրախային համայնքներից ներկայացուցիչներ, այդ թվում՝ Եղվարդից, Նոր Երզնկայից, Նաիրիի տարածաշրջանի մի շարք համայնքներից, Արագածոտնի և Արմավիրի մարզերից բնակիչներ, ՋՕԸ ներկայացուցիչներ, համայնքապետեր, համայնքապետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև ներկայացուցիչներ ՀՀ ԳՆ Ջրային Տնտեսության Պետական կոմիտեից (ՋՏՊԿ),



Ճապոնիայի Միջազգային Համագործակցության գործակալությունից (ՃՄՀԳ), նախագծի ՇՄԱԳ-ն իրականացնող «ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ-ից:

1/3.2 Ձեռք բերված արդյունքներ

Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության, ՀՀ ԳՆ Ջրային Տնտեսության Պետական կոմիտեի, Եղվարդի քաղաքապետարանի, նախագծի ՇՄԱԳ-ն իրականացնող «ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ –ի ներկայացուցիչները ակտիվորեն համագործակցում են Եղվարդի ՕԿ-ի հետ ջրամբարի կառուցման ծրագրի հետ կապված բոլոր հարցերում, հատկապես ՇՄԱԳ-ի իրականացման փուլում, համատեղ իրականացնելով երկու հասարակական լսում և երկու իրազեկման սեմինարներ Եղվարդ և Նոր Երզնկա համայնքներում: http://aarhus.am/?page_id=13295
http://aarhus.am/?page_id=12841 http://aarhus.am/?page_id=12578 http://aarhus.am/?page_id=11444



Ենթագործողություն 1/4

Ըստ անհրաժեշտության աջակցել ՇՄԱԳ գործընթացին տեղեկատվության տարածման միջոցով՝ Ստեղծելով պայմաններ ապահովելու համար հասարակության մասնակցությունը:

1/4.1 Կատարված քայլեր

ՇՄԱԳ գործընթացներն ավելի թափանցիկ դարձնելու նպատակով, ծրագրի ղեկավարի հանձնարարությամբ յուրաքանչյուր համակարգող իր տարածաշրջանում տեղի ունեցող հասարակական լսումների մասին ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական www.mnr.am կայքում տեղադրված հայտարարությունն ուղարկել է ծրագրի ղեկավարին, ՇՄԱԳ-ի նախագծի էլեկտրոնային տարբերակը չգտնելու դեպքում հարցման միջոցով ձեռքբերել այն եւ ուղարկել կայքի պատասխանատուներին: Ինչպես նաև կենտրոնի համակարգողը նշված ժամանակահատվածում տարածաշրջանում տեղի ունեցող հասարակական լսումների մասին ՀՀ բնապահպանության նախարարության



պաշտոնական www.mnp.am կայքում տեղադրված հայտարարությունն ուղարկել է ծրագրի ղեկավարին, զուգահեռ, նույն կայքից փնտրել, գտել, և ուղարկել է նաև ՇՄԱԳ-ի նախագիծը:

Կենտրոնը ճանապարհային քարտեզի 5.1. կետին համապատասխան աջակցել է այլ կազմարեպությունների այն նախաձեռնություններին, որոնք վերաբերել են հասարակական գործունեությանը մասնակցելու և ներգրավվելու մեթոդներին, աջակցել են հանրային լսումների կազմակերպմանը, դրանց տեղի ունենալու օրվա և ժամի մասին իրազեկել հանրությանը կենտրոնների կայքի, էլ. Հասցեների միջոցով:

Ինչպես նաև կենտրոնի համակարգողը մասնակցել է Պռոշյան, Նոր Արտամետ գյուղական համայնքի գլխավոր հատակագծի նախագծային աշխատանքների գնահատման հայտի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներին, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի “Նորագյուղի” անդեզիտաբազալտի հանքավայրի ընդլայնման գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկմանը:



http://aarhus.am/?page_id=10494



1/4.2 Ձեռք բերված արդյունքներ

Կայքի Եղվարդի բաժնի հայտարարությունների մասում հանրային լսումների տեղի ունենալու վերաբերյալ 4 հայտարարություն է տեղադրվել` կից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերով, որոնց միջոցառվ ավելի քան 1000 մարդ տեղեկացել է (յուրաքանչյուր հայտարարությունը միջինը դիտվել է (100-120 անգամ):

Գործողություն 1.1.2 Օրհուս կենտրոնները կազմակերպելու են դասընթացներ եւ իրազեկության բարձրացման միջոցառումներ բնապահպանական որոշում կայացնողների, ՀԿ-ների, մասնագետների և այլ շահագրգիռ կողմերի համար, բարձրացնելու են իրազեկությունը Ազգային և միջազգային օրենսդրության մասին, շարունակելու են նպաստել Օրհուսի եւ Էսպոյի կոնվենցիաների իրականացմանը:

Ենթագործողություն 2/1

Շրջակա միջավայրի առնչությամբ կարևոր որոշումների կայացման գործընթացի և ոլորտային հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, մամլո ասուլիսներ,



դասընթացներ, իրազեկության բարձրացման միջոցառումներ՝ ոլորտի պատասխանատուների, ԲՀԿ-ների, ՋԼՄ-ների, կրթական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

2/1.1 Կատարված քայլեր

Եղվարդի Օրհուս կենտրոնը նշված ժամանակահատվածում կազմակերպել է Օրհուսի կոնվենցիայի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման միջոցառումներ՝ Եղվարդի “Վիքիմիդիա” ակումբի պատանիների, Չարենցավանի երիտասարդական խմբի, Եղվարդի երիտասարդների, “Ապագայի իրազեկ քաղաքացի” բնապահպանական դասընթացի մասնակիցների՝ ՀՀ բոլոր մարզերից և Արցախից երիտասարդների, Եղվարդի թիվ 1ավագ դպրոցի, թիվ 3 հիմնական դպրոցի աշակերտների համար:



Ինչպես նաև հուլիս ամսին կենտրոնը մեկ ամսով հյուրընկալել է ամերիկացի ուսանող Մարիել Կիեվալին, որին ներկայացվել է Օրհուսի կոնվենցիայի, Օրհուս կենտրոնների գործունեության, Շրջակա միջավայրի առնչությամբ կարևոր որոշումների կայացման գործընթացի և ոլորտային



հիմնախնդիրների մասին: Համակարգողների հետ միասին այցելություններ և հանդիպումներ են տեղի

ունեցել ինչպես Եղվարդում, այնպես էլ Գավառում և Հրազդանում՝ այցելելով Օրհուս կենտրոններ:

http://aarhus.am/?page_id=11439

2/1.2 Ձեռք բերված արդյունքներ:

Բարձրացվել է ՋԼՄ ներկայացուցիչների, երիտասարդների իրազեկությունը Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների վերաբերյալ, ամրապնդվել է շրջակա միջավայրի վերաբերյալ կարևոր որոշումներ կայացնելու գործում մասնակցության իրավունքի մասին նրանց գիտելիքները: Անմիջական մասնակիցների ընդհանուր թիվը՝ 200: Ինչպես նաև ստացած գիտելիքները կնպաստեն Վիքիմիդիայում տեղադրվելիք էկոլոգիական թեմաներով գրագետ հոդվածների պատրաստմանը:



Ենթագործողություն 2/2

ՏԻՄ-երի եւ մարզպետարանների աշխատակիցների համար կազմակերպել իրազեկման միջոցառումներ՝ ազգային օրենսդրության եւ Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման եւ դրանց համաձայնեցման վերաբերյալ:

2/2.1 Կատարված քայլեր

Մայիս ամսվա ընթացքում Եղվարդի Օրհուս կենտրոնը Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ 2 վերապատրաստման դասընթաց է իրականացրել ՏԻՄ ներկայացուցիչների համար: Միջոցառումները անց են կացվել Արգել և Քարաշամբ գյուղական համայնքների գյուղապետարաններում: /http://aarhus.am/?page_id=10471&lang=en/:

2/2.2 Ձեռք բերված արդյունքներ

Բարձրացվել է տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների իրազեկությունը Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների եւ պարտավորությունների վերաբերյալ, ամրապնդվել գիտելիքները, ինչպես նաև ամրապնդվել է տվյալ ՏԻՄ-ի ու ՕԿ-ի միջև գոյություն ունեցող կապը, ձեւավորվել են նոր համագործակցային կապեր: http://aarhus.am/?page_id=10462



Ենթագործողություն 2/3

Համագործակցել շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման հարցերով զբաղվող Այլ նախաձեռնությունների կամ ծրագրերի հետ՝ տեղական և ազգային մակարդակներում:

2/3.1 Կատարված քայլեր

Կենտրոնը հաշվետու ժամանակաշրջանում համագործակցել է «Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ-ի և Չարենցավանի երիտասարդական խմբի հետ: Խորհրդատվության և հանդիպումների միջոցով քննարկել, մշակել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված տեղական ծրագրեր, որորնցից մեկն իրականացվել է, այն է «Եղվարդ» երիտասարդական բնապահպանական հասարակական կազմակերպության և Օրհուս կենտրոնի հետ համագործակցությամբ՝ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության

Ֆինանսավորմամբ, ինչպես նաև Երիտասարդական ակումբների դաշնության աջակցությամբ: Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության սկզբունքով իրականացված հնգօրյա դասընթացին մասնակցում էին Հայաստանի եւ Արցախի 24 երիտասարդներ:

Կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է նաև Եղվարդի Եղվարդի Յրդ հիմնական դպրոցի, Հայաստանի Պատանեկան նվաճումներ կազմակերպության հետ, իականացնելով բնապահպանական ծրագիր՝ Էկոմարգադաշտի կառուցում: Համագործակցել է նաև Հայաստանի թռչունների պահպանության միության հետ, մասնակցել թռչնադիտարկման:



http://aarhus.am/?page_id=11023

2/3.2 Ձեռք բերված արդյունքներ



Ստեղծվել է համագործակցության բաց հարթակ շրջակա հարցերի շուրջ ծրագրեր իրականացնելու համար: Մի շարք համայնքներում ստեղծվել են իրենց իրավունքների մասին գիտակից երիտասարդների խմբեր, գործընկերներ, որոնք ներգրավված են ոչ միայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող, այլև համայնքային զարգացմանը նպաստող այլ հարցերում:

http://aarhus.am/?page_id=10947

Ենթագործողություն 2/4

Աջակցել և խթանել ՔՀԿ-ների միջև համագործակցությանը և գործընկերային

Հարաբերությունների ձևավորմանը՝ տեղական և ազգային մակարդակներում:

2/4.1 Կատարված քայլեր

Կենտրոնը հաշվետու ժամանակաշրջանում համագործակցել է “Եղվարդ” երիտասարդական-բնապահպանական ՀԿ-ի և Չարենցավանի երիտասարդական խմբի հետ: Խորհրդատվության և հանդիպումների միջոցով քննարկել, մշակել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված տեղական ծրագրեր, որորնցից մեկն իրականացվել է, այն է «Եղվարդ» երիտասարդական բնապահպանական հասարակական կազմակերպության և Օրհուս կենտրոնի հետ

համագործակցությամբ՝ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսավորմամբ, ինչպես նաեւ Երիտասարդական ակումբների դաշնության աջակցությամբ: Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության սկզբունքով իրականացված հնգօրյա դասընթացին մասնակցում էին Հայաստանի եւ Արցախի 24 երիտասարդներ:

Կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է նաև Եղվարդի Եղվարդի Յրդ հիմնական դպրոցի, Հայաստանի Պատանեկան նվաճումներ կազմակերպության հետ, իականացնելով բնապահպանական ծրագիր՝ Էկոմարզադաշտի կառուցում: Համագործակցել է նաև Հայաստանի թռչունների պահպանության միության հետ, մասնակցել թռչնադիտարկման:

2/3.2 Ձեռք բերված արդյունքներ

Ստեղծվել է համագործակցության բաց հարթակ շրջակա հարցերի շուրջ ծրագրեր իրականացնելու համար: Մի շարք համայնքներում ստեղծվել են իրենց իրավունքների մասին գիտակից երիտասարդների խմբեր, գործընկերներ, որոնք ներգրավված են ոչ միայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող, այլև համայնքային զարգացմանը նպաստող այլ հարցերում:

Գործողություն 1.1.3

Օրհուս կենտրոնները կնպաստեն մատչելի բնապահպանական տեղեկատվության հասանելիությունը տարբեր գործիքների միջոցով (www.aarhus.am վեբ կայք, տեղեկագրեր, տեղեկատվական վահանակներ, եւ այլն), ավելի ակտիվ հաղորդակցվելու են տեղական եւ ազգային ՋԼՄ-ների հետ:

Ենթագործողություն 3/1

Տեղեկատվության հավաքագրում վերկայքի համապատասխան բաժինները թարմացնելու համար՝ «Օրհուս կենտրոններին առնչվող փաստաթղթեր», «Միջազգային Կոնվենցիաներին», «Փաստաթղթեր կապված Օրհուսի կոնվենցիայի հետ», «Օրհուս կենտրոնների գրադարան», «Հղումներ», «Կազմակերպություններ», «Հրապարակումներ» եւ այլն:

3/1.1 Կատարված քայլեր

2015թ.հաշվետու ժամանակահատվածում www.aarhus.am կայքը մշտապես գործել է թարմացվել է, կայքի պատասխանատուին և խմբագրի ուղարկվել է կենտրոնի միջոցառումները լուսաբանող հոդվածներ, լուսանկարներ: Ուղարկված նյութերի անզլերեն լեզվով թարգմանությունները ապահովել են կենտրոնի համակարգողները, իսկ համակարգող Անուշ Բեյբույանը ապահովել է նաև կայքի բոլոր նյութերի անզլերեն լոզվով թարգմանությունը:



3/1.2 Ձեռք բերված արդյունքներ

Կայքում այցելությունների, նյութերի դիտվածության քանակը հասնում է մի քանի հարյուրների, անգամ 2-3 հազարի:

Գործողություն 1.1.4 Օրհուս կենտրոնները կնպաստեն բնապահպանական կրթության և պատասխանատու վարքագծի ձևաորմանը հասարակության շրջանում շրջակա միջավայրի վերաբերյալ, այդ թվում, Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքներին:

Ենթագործողություն 4/1

Իթանել բնապահպանական կրթությունը և աջակցել Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրավունքների իրականացմանը:

4/1.1 Կատարվածքայլեր

Հաշվետու ժամանակաշրջանում երիտասարդների, պատանիների էկոկրթական մակարդակի բարձրացմանն ուղղված կազմակերպվել է թվով 10 էկոկրթական սեմինար, ֆիլմի դիտում՝ նվիրված օզոնային շերտի պահպանությանը, Օրհուսի կոնվենցիային, էներգախնայողությանը, բնապահպանական հիմնախնդիրներին: Էկոկրթական միջացառումներ կազմակերպվել են Եղվարդ, Նոր Երզնկա, Զովունի համայնքներում: Կենտրոնի համակարգողը մասնակցել է մի շարք բնապահպանական բաց դասերի, միջոցառումների Նոր Երզնկա, Զովունի, Չարենցավան և Եղվարդ համայնքներում:



4/1.2 Ձեռք բերված արդյունքներ

Կատարված աշխատանքների արդյունքում թվով մոտ 150 երիտասարդներ, պատանիներ ստացել են բնապահպանական գիտելիքներ վերը նշված թեմաների վերաբերյալ, իրազեկվել Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների մասին: http://aarhus.am/?page_id=10152

http://aarhus.am/?page_id=9729



Ենթագործողություն 4/3

Իրականացվող ծրագրի նպատակներին համահունչ մշակել գործունեության աշխատանքային ծրագիր, հաշվի առնելով տարածաշրջանի բնապահպանական առանձնահատկությունները եւ առկա իրողությունները:

4/3.1 Կատարված քայլեր

Եղվարդի Օրհուս կենտրոնի կողմից մշակվել է տեխնիկական հանձնարարականի կետերի վրա հիմնված տարեկան աշխատանքային պլան, որտեղ հաշվի են առնվել նաև տարածքային

առանձնահատկություններն ու տեղի բնապահպանական հրատապ խնդիրները: Պլանը ներկայացվել, քննարկվել, հաստատվել է փորձագետների խորհրդի կազմի կողմից: http://aarhus.am/?page_id=9716



http://aarhus.am/images/Yeghvard/Protocol_eghvard.pdf:

4/3.2 Ձեռք բերված արդյունքներ:


Կենտրոնների փորձագիտական խորհուրդների անդամները մշտական կապի մեջ են եղել համակարգողների հետ, գործողություններն իրականացվել են համաձայնեցված:

Ենթագործողություն 4/4

Իրականացնել ծրագրի ղեկավարի կողմից հաստատված ամենամսյա գործունեության պլանով նախատեսված գործողությունները, մասնագիտական խորհրդատվության ապահովում՝ կենտրոնների աշխատանքների կազմակերպման, իրականացման մասով:

4/4.1 Կատարված քայլեր

Ծրագրի մեկնարկի սկզբից պլանավորվել ու մայիս ամսից գործի է դրվել գործողությունների օրացույց, որն ըստ ամիսների ու ըստ կենտրոնների զետեղված է կայքում և որը առավել տեսանելի ու վերահսկելի է դարձնում կենտրոնների կողմից պլանավորվող ու իրականացվող գործողությունները:



Դրան զուգահեռ կայքում տեղադրվել են նաև նախատեսվող միջոցառումների որոշ մասի հայտարարությունները, մյուսների մասին հանրության իրազեկումն ապահովվել է տեղական շահագրգիռ կազմակերպությունների ու քաղաքացիների էլեկտրոնային փոստի հասցեների, հեռախոսազանգերի միջոցով: Իրականացվել է ծրագրի ղեկավարի կողմից նախատեսված գործողությունները, կենտրոնը տրամադրել է ամսական գործողությունների օրացույց:

3. Ծրագրի ուղղակի եւ անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:

Հաշվետու ժամանակաշրջանում Եղվարդի Օրհուս կենտրոնը սերտորեն համագործակցել է հասարակական կազմակերպությունների, համայնքների ղեկավարների. մի շարք պետական եւ համայնքային կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության, ՀՀ ԳՆ Ջրային Տնտեսության Պետական կոմիտեի, Եղվարդի քաղաքապետարանի, ՇՄԱԳ-ն իրականացնող «ԷՅ ԹԻ ԷՍ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ –ի, Եղվարդի թիվ 1 և 3 դպրոցների, "Եղվարդ" երիտասարդական- բնապահպանական ՀԿ-ի, Զարենցավանի ուսանողական խորհրդի, Հայաստանի Պատանեկան նվաճումներ կազմակերպության, Հայաստանի թռչունների պահպանության միության հետ և այլն:

4. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքներ, քաղած դասեր և եզրակացություններ.

- Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնի ձեռք բերված արդյունքներից կարող ենք համարել Եղվարդի ջրամբարի կառուցման «Տեխնիկատնտեսագիտական իմնավորման ուսումնասիրություններ» ծրագրի, Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման նախագծի վերաբերյալ ՀՀ Ջրային պետական տնտեսության կոմիտեի, Ճապոնիայի միջազգային գործակալության և Եղվարդի քաղաքապետարանի հետ ակտիվորեն համագործակցությունը, ծրագրի ՇՄԱԳ փուլի իրականացմանն աջակցելն ու հանրային լսումների և իրազեկման սեմինարների կազմակերպումը:
- Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնն հյուրընկալված ամերիկացի ուսանող Մարիել Կիեվալին ներկայացվել է Հայաստանի Օրհուս կենտրոնների գործունեության, Օրհուսի կոնվենցիայի, ինչպես նաև ՀՀ-ում առկա բնապահպանական խնդիրների, դրանց ուղղված Օրհուս կենտրոնների կողմից կատարված աշխատանքների մասին: Ինչպես նաև ուսանողուհին հնարավորություն է ունեցել մասնակցել կենտրոնի ամենօրյա աշխատանքներին, այցելելով նաև Գավառի և Հրազդանի Օրհուս կենտրոններ: Ուսանողուհին ճանապարհային քարտեզի միջոցով գնահատել է կենտրոնների աշխատանքը, դրական արձագանքել և տվել դրական կարծիքներ, նշելով կենտրոնների կողմից արված և կատարվելիք ահռելի աշխատանքը, համարելով այն բավականին արդյունավետ:

Այս փաստը ևս որոշակիորեն կարող ենք արդյունք համարել:

- Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն աջակցել է երիտասարդական կազմակերպությունների շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրերի մշակմանն ու արդյունավետ իրականացմանը, ինչի արդյունքում ՀՀ բոլոր մարզերից և Արցախից երիտասարդներ մասնակցել են բնապահպանական դասընթացի, ձեռք բերել բնապահպանական խնդիրների հետ կապված հանրությանը պատշաճ իրազեկելու, բնապահպանության ոլորտին առնչվող որոշումների ընդունման գործում ակտիվ մասնակցություն ունենալու մեխանիզմների, կայուն զարգացման ոլորտում ՀՀ միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների իրականացման եւ ընթացքի վերաբերյալ գիտելիքներ:
- Կենտրոնի կողմից իրականացված հանդիպումների, քննարկումների, էկոկրթական սեմինարների արդյունքում բարձրացել է Օրհուսի կոնվենցիայի և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ մասնակիցների իրազեկության մակարդակը:
- Իրականացված միջոցառումների արդյունքում ՀՀ բազմաթիվ բնակիչներ, ՋԼՄ-ների, ՔՀԿ-ների եւ ՏԻՄ-երի ներկայացուցիչներ իրազեկվել են ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային բնապահպանական համաձայնագրերի եւ մասնավորապես Օրհուսի համաձայնագրի դրույթների, ինչպես նաև դրանցով ամրագրված քաղաքացիների իրավունքների վերաբերյալ:
- Էկոկրթական միջոցառումներին մասնակցել են ավելի քան 450 երիտասարդներ եւ պատանիներ, որոնց շրջանում բարձրացել է շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ հետաքրքրվածության մակարդակը:

5. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ եւ նոր լուծումներ

Հաշվետու ժամանակահատվածում էական դժվարություններ եւ խոչնդոտներ չեն եղել, երբեմն եղել են չնախատեսված իրավիճակներ, որոնք շտկվել են, չխաթարելով կենտրոնի գործունեությունը:

Հաշվետվությանը կից ներկայացվում է վիճակագրական մանրամասն տվյալներ իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Ռուզաննա Մանյան

Եղվարդի Օրհուս կենտրոնի համակարգող

Հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Երևանյան 1

Հեռ. + 37494331055

Է. հասցե ruzannamanyan@gmail.com

Անուշ Բեյբության

Եղվարդի Օրհուս կենտրոնի համակարգող

Հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Երևանյան 1

Հեռ. + 37491411435

Էլ. հասցե anush.beybutyan@mail.ru

